- ▶ մակրոտնտեսական կամ աշխարհագրաքաղաքական տեղեկատվություն, ինչպիսիք են ՀՆԱ-ի աճի տեմպերը կոնկրետ ոլորտի և աշխարհագրական շրջաններում, որոնցում գործունեություն է ծավալում հաճախորդը,
- ▶ այլ հիմնավորված և հաստատվող տեղեկատվություն հաճախորդի կառավարման որակի և հնարավորությունների վերաբերյալ, որը տեղին է կազմակերպության գործունեության արդյունքների գնահատման համար:

Փոքր բիզնեսի վարկերը գնահատվում են Բանկի կողմից, օգտագործելով մանրածախ ապրանքատեսակների մոդելները:

Սպառողական վարկավորում և հիփոթեքային վարկավորում

Սպառողական վարկավորումը ներառում է ֆիզիկական անձանց տրամադրված գրավով չապահովված վարկեր, վարկային քարտեր և օվերդրաֆտներ: Այս ապրանքատեսակների, ինչպես նաև հիփոթեքային վարկերի և փոքր բիզնեսի վարկերի գնահատումը հիմնված է ժամկետանց օրերի քանակի ցուցանիշի վրա:

Դեֆոլտի ժամանակ գործիքի արժեքը

Դեֆոլտի ժամանակ գործիքի արժեքը (EAD) իրենից ներկայացնում է արժեզրկման գնահատման ենթակա ֆինանսական գործիքների համախառն հաշվեկշռային արժեքը, որը հաշվի է առնում ինչպես հաճախորդի ունակությունը մեծացնելու իր վարկի գումարը առաջիկա դեֆոլտի դեպքում, այնպես էլ հնարավոր վաղաժամկետ մարումները: Փուլ 1-ում գտնվող ակտիվների համար Բանկը գնահատում է 12 ամսվա ընթացքում հնարավոր դեֆոլտի հավանականությունը 12ամսվա հաշվարկելու նպատակով: Փուլ 2-ին, Փուլ 3-ին և POCI դասին պատկանող ֆինանսական ակտիվների համար դեֆոլտի ժամանակ գործիքի արժեքը դիտարկվում է գործիքների ողջ կյանքի տևողության ընթացքում տեղի ունեցող դեպքերի համար:

(հազար ՀՀ դրամ)

Բանկը առաջարկում է իր կորպորատիվ և մանրածախ հաճախորդներին տարբեր օվերդրաֆտներ և վարկային քարտեր, որոնք Բանկն իրավունք ունի ետ կանչել և/կամ նվազեցնել սահմանաչափը՝ ծանուցելով ընդամենը մեկ օր առաջ: Ծանուցման ներկայացման համար Բանկը չի սահմանափակում վարկային կորուստների ռիսկի ենթարկվածությունը պայմանագրային ժամկետով և փոխարենը հաշվարկում է ԱՎԿ այն ժամանակահատվածի համար, որը արտացոլում է Բանկի հաճախորդների վարքագծի վերաբերյալ ակնկալիքները, դեֆոլտի հավանականությունը և Բանկի կողմից վարկային ռիսկը նվազեցնելու ուղղությամբ հետագա փոփոխությունները, որոնք կարող են նախատեսել վարկային գծերի նվազեցում կամ փակում:

Դեֆոլտի ժամանակ կորստի չափը

LGD-ն հաշվարկվում է կոլեկտիվ հիմունքով՝ հիմք ընդունելով դեֆոլտի ամսաթվից հետո վարկի վերականգնման վիճակագրական տեղեկատվությունները:

LGD չափը գնահատվում է 1-ին, 2-րդ և 3-րդ Փուլերի և POCI բոլոր ակտիվների դասերի համար: Նման LGD չափերի համար ելակետային տվյալները գնահատվում են և, հնարավորության դեպքում, ճշգրտվում են փորձարկման միջոցով պատմական տվյալների հիման վրա՝ հաշվի առնելով վերջին շրջանում վերականգնումները: Անհրաժեշտության դեպքում այդպիսի տվյալները որոշվում են յուրաքանչյուր տնտեսական սցենարի համար:

Վարկային ռիսկի զգալի աճ

Բանկը մշտապես ստուգում է բոլոր ակտիվները, որոնց նկատմամբ հաշվարկվում է ԱՎԿ: Բանկը վերլուծում է, արդյոք տվյալ գործիքի կամ գործիքների պորտֆելի վարկային ռիսկը զգալիորեն ավելացել է սկզբնական ճանաչման պահից ի վեր՝ որոշելու համար, թե ինչ չափով է հարկավոր ստեղծել արժեզրկման գծով պահուստը գործիքի կամ գործիքների պորտֆելի համար (12 ամսվա ԱՎԿ-ի կամ ամբողջական ժամկետի ԱՎԿ-ի արժեքով): Բանկը համարում է, որ վարկային ռիսկը զգալիորեն աճել է սկզբնական ճանաչման պահից հետո, եթե պայմանագրային վճարումները ուշացվել են ավելի քան 30 օրով:

Բանկը նաև կիրառում է լրացուցիչ որակական մեթոդներ՝ որոշելու համար, թե արդյոք տեղի է ունեցել ակտիվի վարկային ռիսկի զգալի աճ. օրինակ, հաճախորդի/վարկի տեղափոխումը խնդրահարույց վարկերի ցանկ կամ վարկի վերաձևակերպում վարկային իրադարձությունների հետ կապված: Որոշ դեպքերում Բանկը կարող է նաև վերանայել վերոհիշյալ «Դեֆոլտի սահմանումը» բաժնում նկարագրված իրադարձությունները, որպես վարկային ռիսկի զգալի աճի չափանիշ, այլ ոչ թե որպես դեֆոլտ:

Միևնույն ակտիվների խմբի համար ԱՎԿ-ի գնահատման դեպքում Բանկը կիրառում է նույն սկզբունքները՝ գնահատելու համար, թե արդյոք տեղի է ունեցել վարկային ռիսկի զգալի աճ սկզբնական ճանաչումից հետո:

Ֆինանսական ակտիվների համախմբում, որոնք գնահատվում են խմբային հիմունքներով

Ելնելով ստորև նշված գործոններից, Բանկը հաշվարկում է ԱՎԿ անհատական կամ խմբային հիմունքներով:

- Ակտիվների դասերը, որոնց համար Բանկը հաշվարկում է ԱՎԿ անհատական հիմունքով, ներառում են հետևյալը.
 - ▶ Բոլոր Փուլ 3-ում գտնվող ակտիվները, անկախ ֆինանսական ակտիվների դասից,
 - ▶ Փուլ 2-ի և Փուլ 3-ի կորպորատիվ վարկավորման պորտֆելը,
 - ▶ Խոշոր և եզակի գործիքները փոքր բիզնեսի վարկավորման պորտֆելում,
 - ▶ Գանձապետական և միջբանկային հարաբերությունները (օրինակ, պահանջները բանկերի նկատմամբ, դրամական միջոցների համարժեքները և ամորտիզացված արժեքով և իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքների միջոցով չափվող պարտքային ներդրումային արժեթղթերը)
 - ▶ Ֆինանսական ակտիվները, որոնք դասակարգվել են որպես POCI սկզբնական վարկի դադարեցման և պարտքի վերականգնման արդյունքում նոր վարկի ճանաչման ժամանակ:

Ակտիվների դասերը, որոնց համար Բանկը հաշվարկում է ԱՎԿ խմբային հիմունքով, ներառում են հետևյալը.

- ▶ 1-ին և 2-րդ փուլերում հիփոթեքային և սպառողական վարկերը, ինչպես նաև 1-ին փուլի առևտրային վարկավորման պորտֆելը,
- ▶ ձեռք բերված արժեզրկված ֆինանսական ակտիվները, որոնք կառավարվում են խմբային հիմունքներով:

Կանխատեսվող տեղեկատվություն և բազմակի տնտեսական սցենարներ

ԱՎԿ մոդելներում Բանկը հիմնվում է կանխատեսվող տեղեկատվության լայն շրջանակի վրա, մասնավորապես այնպիսի տնտեսական ելակետային տվյալների, ինչպիսիք են՝

- ▶ Գործազրկության մակարդակը,
- ▶ Կենտրոնական բանկի բազային տոկոսադրույքները,

(հազար ՀՀ դրամ)

► Փոխարժեքները:

ԱՎԿ-ի հաշվարկման համար օգտագործվող ելակետային տվյալները և մոդելները միշտ չէ, որ արտացոլում են շուկայի բոլոր բնութագրերը ֆինանսական հաշվետվության ամսաթվի դրությամբ: Որպեսզի դա արտացոլվի, երբեմն կատարվում են որակական ճշգրտումներ կամ ուղղումներ ժամանակավոր ճշգրտումների տեսքով, եթե այդ տարբերությունները էական են:

Կանխատեսվող տեղեկատվությունը Բանկը ստանում է արտաքին աղբյուրներից (արտաքին վարկանիշային գործակալություններ, պետական մարմիններ, օրինակ՝ կենտրոնական բանկեր և միջազգային ֆինանսական հաստատություններ) : Բանկի վարկային ռիսկի բաժնի փորձագետները գնահատում են տարբեր սցենարներին վերագրելի կշիռները: Ստորև ներկայացված աղյուսակում ցույց են տրված կանխատեսվող տնտեսական փոփոխականները/ենթադրությունները, ըստ տարբեր տնտեսական սցենարների, որոնց հիման վրա հաշվարկվում ԱՎԿ-ն:

Հիմնական գործոնները	ԱՎԿ սցենարը	Որոշված հավանական- ությունը, %	2025թ., %	2026թ., %
ԱՄՆ դոլար / ՀՀ դրամ փոխարժեք				
	Լավատեսական	5%	381.9	384.8
	Բազիսային	90%	402.0	405.0
	Վատատեսական	5%	422.1	425.3
Ներմուծման տեմպը				
	Լավատեսական	5%	1,535.4	1,569.7
	Բազիսային	90%	1,462.2	1,495.0
	Վատատեսական	5%	1,389.1	1,420.2
Արտահանման տեմպը				
	Լավատեսական	5%	1,176.5	1,223.5
	Բազիսային	90%	1,120.5	1,165.2
	Վատատեսական	5%	1,064.4	1,106.9
Ոսկու գին, դոլար / տրվ ունցիա				
	Լավատեսական	5%	2,441.3	2,362.5
	Բազիսային	90%	2,325.0	2,250.0
	Վատատեսական	5%	2,208.8	2,137.5

Իր քաղաքականության համաձայն, Բանկը պարտավոր է իր վարկային պորտֆելի շրջանակներում վերագրել ճիշտ և հետևողական վարկանիշեր: Դա հնարավորություն է ընձեռում կենտրոնացված կերպով դեկավարել առկա ռիսկերը, ինչպես նաև թույլ է տալիս համեմատել վարկային ռիսկերի չափը՝ ըստ գործունեության, աշխարհագրական կամ այլ ոլորտների: Վարկանիշների տրման համակարգը հիմնվում է մի շարք ֆինանսավերլուծական մեթոդների, ինչպես նաև մշակված շուկայական տվյալների վրա, որոնք ներկայացնում են գործընկերների ռիսկի գնահատման համար հիմնական ելակետային տեղեկատվությունը: Ռիսկի բոլոր ներքին դասերը սահմանված են Բանկի կիրառվող վարկանշային քաղաքականության համաձայն: Կիրառվող վարկանիշները պարբերաբար գնահատվում և վերանայվում են:

Հաճախորդներին տրված վարկերի արժեզրկման պահուստների վերաբերյալ ավելի մանրամասն տեղեկատվություն ներկայացված է Ծանոթագրություն 8-ում:

Ֆինանսական երաշխիքները, ակրեդիտիվները և վարկային գծերի չօգտագործված մասերը նույնպես ստուգվում են արժեզրկվածության տեսանկյունից, իսկ ակնկալվող վարկային կորուստների գնահատված պահուստը հաշվարկվում է այնպես, ինչպես վարկերի դեպքում:

Առկա է նաև պետական սուբսիդավորում, որը նախատեսված է իրավաբանական անձանց համար: Այդ ծրագրի շրջանակներում տրամադրվել է 52 վարկ 41,305 հազ. ՀՀ դրամ գյուղատնտեսական բիզնեսին:

Ստորև ներկայացված է Բանկի դրամական ակտիվների և պարտավորությունների կենտրոնացումը՝ աշխարհագրական հայտանիշով.

	31/12/2025 թ.				31/12/2024 թ.			
	Հայաստան	ՏՀԶԿ	ԱՊՀ և այլ երկրներ	Ընդամենը	Հայաստան	ՏՀԶԿ	ԱՊՀ և այլ երկրներ	Ընդամենը
Ակտիվներ								
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	21,498,270	–	2,272,331	23,770,601	19,956,733	–	2,472,944	22,429,677

(հազար ՀՀ դրամ)

Առևտրային արժեթղթեր	-	-	-	-	-	-	-	-
Հետգնման պայմանագրով գրավադրված առևտրային արժեթղթեր	-	-	-	-	-	-	-	-
Պահանջներ բանկերի նկատմամբ	25,290,741	-	-	25,290,741	8,810,863	-	-	8,810,863
Հաճախորդներին տրված վարկեր	164,719,417	-	85,492	164,804,909	161,020,060	4,685	472,957	161,497,702
Ներդրումային արժեթղթեր	23,307,651	23,502	-	23,331,153	21,773,953	22,664	-	21,796,617
Հետգնման պայմանագրերով գրավադրված ներդրումային արժեթղթեր	-	-	-	-	-	-	-	-
Այլ ֆինանսական ակտիվներ	507,287	-	465,683	972,970	1,228,132	-	571,094	1,799,226
	<u>235,323,366</u>	<u>23,502</u>	<u>2,823,506</u>	<u>238,170,374</u>	<u>212,789,741</u>	<u>27,349</u>	<u>3,516,995</u>	<u>216,334,085</u>
Պարտավորություններ								
Պարտավորություններ ՀՀ ԿԲ-ի նկատմամբ	29,179	-	-	29,179	47,092	-	-	47,092
Պարտավորություններ բանկերի նկատմամբ	39,947	-	5,753,398	5,793,345	281,099	-	3,747,002	4,028,101
Հաճախորդների հաշիվներ	162,650,105	204,127	7,601,797	170,456,029	151,704,415	179,626	8,430,448	160,314,489
Այլ փոխառու միջոցներ	7,401,072	-	-	7,401,072	8,365,062	-	-	8,365,062
Այլ ֆինանսական պարտավորություններ	1,970,776	-	-	1,970,776	1,205,317	-	-	1,205,317
	<u>172,091,079</u>	<u>204,127</u>	<u>13,355,195</u>	<u>185,650,401</u>	<u>161,602,985</u>	<u>179,626</u>	<u>12,177,450</u>	<u>173,960,061</u>
Ակտիվների և պարտավորությունների գծով զուտ դիրք	<u>63,232,287</u>	<u>(180,625)</u>	<u>(10,531,689)</u>	<u>52,519,973</u>	<u>51,186,756</u>	<u>(152,277)</u>	<u>(8,660,455)</u>	<u>42,374,024</u>

Իրացվելիության ռիսկ և ֆինանսավորման աղբյուրների կառավարում

Իրացվելիության ռիսկն այն ռիսկն է, որ Բանկը սովորական կամ չկանխատեսված իրավիճակում չի կարողանա կատարել իր պարտավորությունները վերջիններիս մարման ժամանակ: Այդ ռիսկի զսպման նպատակով դեկավարությունն ապահովել է ֆինանսավորման տարբեր աղբյուրներ՝ ի լրումն արդեն իսկ գոյություն ունեցող բանկային ավանդների հիմնական բազայի: Դեկավարությունն իրականացնում է նաև ակտիվների կառավարում՝ հաշվի առնելով իրացվելիությունը, և ապագա դրամական հոսքերի և իրացվելիության օրական վերահսկողություն: Այդ գործընթացը ներառում է ակնկալվող դրամական միջոցների գնահատում և առաջնակարգ ապահովման միջոցի առկայություն, որն անհրաժեշտության դեպքում կարող է օգտագործվել լրացուցիչ ֆինանսավորման ստացման համար:

Բանկը գնահատում և կառավարում է իրացվելիությունը՝ հիմնվելով ՀՀ ԿԲ-ի սահմանած զուտ իրացվելի ակտիվների և հաճախորդների պարտավորությունների հարաբերակցության ցուցանիշների վրա: 2025թ. դեկտեմբերի 31-ի և 2024թ. դեկտեմբերի 31 ի դրությամբ այդ հարաբերակցությունը կազմել է՝

	Սահմանային արժեք	31/12/2025 թ. %	31/12/2024 թ. %
Ն21-Ընդհանուր իրացվելիություն (բարձր իրացվելի ակտիվներ/ընդհանուր ակտիվներ)	Նվ 15%	31,15%	27,21%
Ն22-Ընթացիկ իրացվելիություն (բարձր իրացվելի ակտիվներ/ցպահանջ պարտավորություններ)	Նվ 60%	151,35%	106,79%

Ֆինանսական պարտավորությունների վերլուծությունը՝ ըստ միևնույն մարում մնացած ժամկետների

Ստորև ներկայացվում է դեկտեմբերի 31-ի դրությամբ Բանկի ֆինանսական պարտավորությունների բաշխումը՝ ըստ միևնույն մարումը մնացած ժամկետների՝ պայմանագրային չգեղջված պարտավորությունների հիման վրա: Պարտավորությունները, որոնք ենթակա են ցպահանջ մարման, դասակարգվում են այնպես, ինչպես եթե մարման պահանջը ներկայացված լիներ ամենավաղ հնարավոր ամսաթվով: Սակայն Բանկը գտնում է, որ շատ հաճախորդներ չեն պահանջի վճարումը այն ամենավաղ հնարավոր ամսաթվի դրությամբ, որով Բանկը պարտավորված կլինի կատարել վճարումը, և աղյուսակը չի արտացոլում ակնկալվող դրամական հոսքերը՝ հաշվարկված Բանկի կողմից՝ անցյալ ժամանակաշրջանների ավանդների պահանջների տեղեկատվության հիման վրա:

2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	Առևտրային ածանցյալ գործիքներ	Մինչև 3 ամիս	3-12 ամիս	1-5 տարի	Ավելի քան 5 տարի	Ընդամենը
Ֆինանսական պարտավորություններ						
Պարտավորություններ ՀՀ ԿԲ-ի նկատմամբ	-	-	-	35,531	-	35,531

(հազար ՀՀ դրամ)

Պարտավորություններ բանկերի նկատմամբ	-	5,793,345	-	-	-	5,793,345
Հաճախորդների հաշիվներ Այլ փոխառու միջոցներ	-	83,212,699	87,974,061	4,210,095	435,249	175,832,104
Այլ ֆինանսական պարտավորություններ	-	77,504	270,323	2,727,254	6,256,911	9,331,992
Այլ ֆինանսական պարտավորություններ	-	1,970,776	-	-	-	1,970,776
Ընդամենը չզեղչված ֆինանսական պարտավորություններ	-	91,054,324	88,244,384	6,972,880	6,692,160	192,963,748

2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	Առևտրային ածանցյալ գործիքներ	Մինչև 3 ամիս	3-12 ամիս	1-5 տարի	Ավելի քան 5 տարի	Ընդամենը
Ֆինանսական պարտավորություններ						
Պարտավորություններ ՀՀ ԿԲ-ի նկատմամբ	-	-	-	61,085	-	61,085
Պարտավորություններ բանկերի նկատմամբ	-	4,028,101	-	-	-	4,028,101
Հաճախորդների հաշիվներ	-	79,803,351	80,707,422	4,290,403	440,084	165,241,260
Այլ փոխառու միջոցներ	-	68,333	291,628	2,268,809	8,266,051	10,894,821
Այլ ֆինանսական պարտավորություններ	2,823	1,202,494	-	-	-	1,205,317
Ընդամենը չզեղչված ֆինանսական պարտավորություններ	2,823	85,102,279	80,999,050	6,620,297	8,706,135	181,430,584

Ստորև ներկայացված աղյուսակը արտահայտում է Բանկի պայմանական և պայմանագրային պարտավորությունները՝ ըստ մարման պայմանագրային ժամկետների: Փոխառություն տրամադրելու գծով բոլոր չկատարված պարտավորությունները ներառվում են հնարավոր ամենավաղ ժամանակաշրջանում, որի ընթացքում հաճախորդը կարող է պահանջել դրա կատարումը: Ֆինանսական երաշխիքի պայմանագրերի դեպքում երաշխիքի առավելագույն գումարը վերագրվում է այն ամենավաղ ժամանակաշրջանին, որի ընթացքում կարող է պահանջվել երաշխիքի կատարումը:

	Մինչև 3 ամիս	Ընդամենը
2025 թ.	2,849,784	2,849,784
2024 թ.	3,515,493	3,515,493

Բանկն ակնկալում է, որ ոչ բոլոր պայմանական կամ պայմանագրային պարտավորությունների կատարումը կպահանջվի մինչև ժամկետների ավարտը:

Բանկը ներգրավել է նշանակալի միջոցներ հաճախորդներից: Այդպիսի միջոցների էական նվազումը կարող է բացասաբար անդրադառնալ Բանկի գործունեության վրա: Ղեկավարությունը գտնում է, որ տեսանելի ապագայում Բանկի ֆինանսավորման ծավալները կպահպանվեն կայուն մակարդակի վրա, և այդ միջոցների վերադարձման անհրաժեշտության դեպքում Բանկը կստանա նախօրոք ծանուցում, և կարող է իրացնել իր իրացվելի ակտիվները՝ անհրաժեշտ վճարումներ իրականացնելու նպատակով:

Մարման ժամկետների միջև տարբերությունների վերլուծությունը չի արտացոլում այն ընթացիկ հաշիվների միջոցների պատմական կայունությունը, որոնց վերադարձը սովորաբար տեղի է ունենում ավելի երկար ժամանակահատվածի ընթացքում, քան ներկայացված է վերոնշյալ աղյուսակում: Այդ մնացորդները աղյուսակում ներառված են մինչև 3 ամիս մարման ժամկետ ունեցող գումարներում:

Պահանջները հաճախորդների նկատմամբ ներառում են ֆիզիկական անձանցից ներգրավված ժամկետային ավանդները: ՀՀ օրենսդրության համաձայն Բանկը պարտավոր է հետ վճարել նման ավանդները ավանդատուի առաջին իսկ պահանջով, տե՛ս Ծանոթագրություն 17:

Շուկայական ռիսկ

Շուկայական ռիսկը Բանկի ֆինանսական գործիքների ապագա դրամական հոսքերի կամ դրանց իրական արժեքի փոփոխության ռիսկն է՝ շուկայական պայմանների՝ ներառյալ արտարժույթի փոփոխության, տոկոսադրույքների և բաժնային գործիքների գների փոփոխության արդյունքում:

Տոկոսադրույքի փոփոխման ռիսկ

Տոկոսադրույքի ռիսկը Բանկի ֆինանսական գործիքների ապագա դրամական հոսքերի կամ դրանց իրական արժեքի հնարավոր փոփոխության ռիսկն է տոկոսադրույքների փոփոխման արդյունքում: Ստորև ներկայացված աղյուսակը ցույց է տալիս Բանկի ֆինանսական արդյունքների մասին հաշվետվության զգայունությունը

(հազար ՀՀ դրամ)

տոկոսադրույքների հնարավոր փոփոխությունների նկատմամբ, բոլոր այլ փոփոխական մեծությունները հաստատուն լինելու դեպքում:

Արտարժույթի ռիսկ

Արտարժույթի ռիսկը արտարժույթի փոխարժեքի փոփոխությունների հետևանքով ֆինանսական գործիքների արժեքի տատանման ռիսկն է: Տնօրինությունը սահմանել է արտարժույթային ռիսկերի սահմանաչափեր՝ հիմնվելով ՀՀ ԿԲ կողմից սահմանված նորմատիվների վրա: Դիրքերը վերահսկվում են օրական կտրվածքով:

Գործառնական ռիսկ

Գործառնական ռիսկը համակարգի խափանման, աշխատակազմի կողմից թույլ տրված սխալների, խարդախությունների կամ արտաքին գործոնների հետևանքով հնարավոր կորուստի ռիսկն է: Երբ ներքին վերահսկողության համակարգը դադարում է գործել, գործառնական ռիսկերը կարող են վնաս հասցնել համբավին, ունենալ իրավական հետևանքներ կամ բերել ֆինանսական վնասներ: Բանկը չի ենթադրում, որ բոլոր գործառնական ռիսկերը վերացված են, սակայն ներքին վերահսկողության համակարգի օգնությամբ և հնարավոր ռիսկերի որոշման և համապատասխան ռեակցիայի միջոցով Բանկը կարող է կառավարել նման ռիսկերը: Ներքին վերահսկողության համակարգը նախատեսում է պարտավորությունների արդյունավետ բաժանման, մուտքի թույլատվության, համադրման և հաստատման ընթացակարգեր, աշխատակազմի ուսուցում և գնահատում՝ այդ թվում ներքին աուդիտը:

26. Իրական արժեքի չափում**Իրական արժեքի չափման գործընթացներ**

Բանկի ղեկավարությունը սահմանում է ինչպես իրական արժեքի պարբերաբար չափման քաղաքականությունն ու ընթացակարգերը, օրինակ՝ չգնանշվող առևտրային, իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող և իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքների միջոցով չափվող արժեթղթերի, ածանցյալ ֆինանսական գործիքների, ներդրումային գույքի և շենքերի համար, այնպես էլ իրական արժեքի ոչ պարբերաբար չափման քաղաքականությունը, օրինակ՝ վաճառքի համար պահվող ակտիվների համար:

Արտաքին գնահատողները ներգրավվում են նշանակալի ակտիվների գնահատման համար, ինչպիսիք են գույքերը, առևտրային և վաճառքի համար մատչելի արժեթղթերը և ածանցյալ գործիքները: Արտաքին գնահատողների ներգրավումը որոշվում է ղեկավարության կողմից: Ընտրությունը կատարվում է՝ հիմնվելով այնպիսի չափանիշների վրա, ինչպիսիք են շուկայի մասին տեղեկացվածությունը, վարկանիշը, անկախությունը և մասնագիտական ստանդարտների պահպանումը: Արտաքին գնահատողների հետ քննարկումներից հետո Բանկի ղեկավարությունը որոշում է, թե ինչ գնահատման տեխնիկա և մուտքային տվյալներ պետք է օգտագործվեն յուրաքանչյուր դեպքի համար:

Յուրաքանչյուր հաշվետու ամսաթվին ղեկավարությունը վերլուծում է այն ակտիվների և պասիվների արժեքների փոփոխությունները, որոնք ենթակա են վերագնահատման Բանկի հաշվապահական հաշվառման քաղաքականության համաձայն: Այս վերլուծությունների համար ճշտվում են հիմնական տվյալները, որոնք կիրառվել են նախորդ գնահատման ժամանակ՝ համադրելով գնահատման հաշվարկի տեղեկատվությունը պայմանագրերի և այլ համապատասխան փաստաթղթերի հետ: Բանկի ղեկավարությունն անկախ գնահատողների հետ միասին համեմատում է յուրաքանչյուր ակտիվի և պարտավորության իրական արժեքի փոփոխությունը յուրաքանչյուր համապատասխան արտաքին աղբյուրների հետ՝ որոշելու համար տվյալ փոփոխության հիմնավորված լինելը:

Իրական արժեքի հիերարխիա

Բանկն օգտագործում է ֆինանսական գործիքների իրական արժեքների բացահայտման և գնահատման մեթոդների հետևյալ հիերարխիկ կառուցվածքը.

- ▶ 1-ին մակարդակ. ակտիվ շուկաներում համանման ակտիվների կամ պարտավորությունների գնանշումներ (չճշգրտվող),
- ▶ 2-րդ մակարդակ. գնահատման մոդելներ, որոնց համար բոլոր ելակետային տվյալները, որոնք էական ազդեցություն են ունենում հաշվետվությունում արտացոլվող իրական արժեքի գումարի վրա, ուղղակի թե անուղղակի կերպով դիտարկելի են,
- ▶ 3-րդ մակարդակ. գնահատման մոդելներ, որոնց համար բոլոր ելակետային տվյալները, որոնք էական ազդեցություն են ունենում հաշվետվությունում արտացոլվող իրական արժեքի գումարի վրա, շուկայում դիտարկելի չեն:

Իրական արժեքի վերաբերյալ տեղեկատվության բացահայտման նպատակով Բանկը առանձնացրել է ակտիվների և պարտավորությունների դասեր՝ հիմնվելով ակտիվների և պարտավորությունների բնույթի, առանձնահատկությունների, ռիսկերի, ինչպես նաև իրական արժեքի հիերարխիայի վրա:

Իրական արժեքի չափումը՝ օգտագործելով

(հազար ՀՀ դրամ)

	Ելակետային տվյալներ (1-ին մակարդակ)	Ելակետային տվյալներ (2-րդ մակարդակ)	Ելակետային տվյալներ (3-րդ մակարդակ)	Ընդամենը
2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ				
Իրական արժեքով չափվող ակտիվներ				
Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքների միջոցով չափվող ներդրումային արժեթղթեր	4,188	23,307,651	19,314	23,331,153
Հետգնման պայմանագրով գրավադրված իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքների միջոցով չափվող ներդրումային արժեթղթեր	-	-	-	-
Ածանցյալ ֆինանսական ակտիվներ	-	32,937	-	32,937
Ընդամենը	4,188	23,340,588	19,314	23,364,090
Ակտիվներ, որոնց իրական արժեքը բացահայտվում է				
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	23,770,601	-	-	23,770,601
Պահանջներ բանկերի նկատմամբ	-	-	25,290,741	25,290,741
Հաճախորդներին տրված վարկեր	-	-	164,376,843	164,376,843
Ընդամենը	23,770,601	-	189,667,584	213,438,185
Իրական արժեքով չափվող պարտավորություններ				
Ածանցյալ ֆինանսական պարտավորություններ	-	-	-	-
Ընդամենը	-	-	-	-
Պարտավորություններ, որոնց իրական արժեքը բացահայտվում է				
Պարտավորություններ ՀՀ ԿԲ-ի նկատմամբ	-	-	29,179	29,179
Պարտավորություններ բանկերի նկատմամբ	-	-	5,793,345	5,793,345
Հաճախորդների հաշիվներ	-	-	170,098,686	170,098,686
Այլ փոխառու միջոցներ	-	-	7,443,966	7,443,966
Ընդամենը	-	-	183,365,176	183,365,176

	Իրական արժեքի չափումը՝ օգտագործելով			Ընդամենը
	Ելակետային տվյալներ (1-ին մակարդակ)	Ելակետային տվյալներ (2-րդ մակարդակ)	Ելակետային տվյալներ (3-րդ մակարդակ)	
2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ				
Իրական արժեքով չափվող ակտիվներ				
Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքների միջոցով չափվող ներդրումային արժեթղթեր	3,350	21,773,953	19,314	21,796,617
Հետգնման պայմանագրով գրավադրված իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքների միջոցով չափվող ներդրումային արժեթղթեր	-	-	-	-
Ածանցյալ ֆինանսական ակտիվներ	-	-	-	-
Ընդամենը	3,350	21,773,953	19,314	21,796,617
Ակտիվներ, որոնց իրական արժեքը բացահայտվում է				
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	22,429,677	-	-	22,429,677
Պահանջներ բանկերի նկատմամբ	-	-	8,810,863	8,810,863
Հաճախորդներին տրված վարկեր	-	-	160,652,451	160,652,451
Ընդամենը	22,429,677	-	169,463,314	191,892,991
Իրական արժեքով չափվող պարտավորություններ				
Ածանցյալ ֆինանսական պարտավորություններ	-	2,823	-	2,823
Ընդամենը	-	2,823	-	2,823
Պարտավորություններ, որոնց իրական արժեքը բացահայտվում է				
Պարտավորություններ ՀՀ ԿԲ-ի նկատմամբ	-	-	47,092	47,092
Պարտավորություններ բանկերի նկատմամբ	-	-	4,028,101	4,028,101
Հաճախորդների հաշիվներ	-	-	159,924,389	159,924,389
Այլ փոխառու միջոցներ	-	-	8,248,992	8,248,992
Ընդամենը	-	-	172,248,574	172,248,574

Իրական արժեքով արտացոլված ֆինանսական գործիքներ

Ստորև ներկայացված է գնահատման մեթոդներով հաշվարկված իրական արժեքով արտացոլված ֆինանսական գործիքների իրական արժեքի որոշման նկարագրությունը: Այն ներառում է Բանկի կողմից այն ենթադրությունների գնահատումը, որոնք կարող էին օգտագործվել շուկայի մասնակիցների կողմից գործիքների արժեքի որոշման ժամանակ:

Առևտրային արժեթղթեր / Ներդրումային արժեթղթեր

(հազար ՀՀ դրամ)

Իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող առևտրային արժեթղթերը և իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքների միջոցով չափվող ներդրումային արժեթղթերը, որոնց արժեքը որոշվում է եկամտաբերության կորի միջոցով, գլխավորապես իրենց մեջ ներառում են պետական արժեթղթեր:

Ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում իրական արժեքով չարտացոլված ֆինանսական գործիքներ

Ստորև ներկայացված են այն ֆինանսական գործիքների իրական և հաշվեկշռային արժեքների համեմատությունը, որոնք ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում չեն արտացոլվում իրական արժեքով: Սույն աղյուսակը չի ներառում ոչ ֆինանսական ակտիվների և պարտավորությունների իրական արժեքները:

	Հաշվեկշռային իրական արժեք		Հաշվեկշռային իրական արժեք		Հանաչված եկամուտ/ (ծախս)	
	2025թ.	2025թ.	2025թ.	2024թ.	2024թ.	2024թ.
Ֆինանսական ակտիվներ						
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	23,770,601	23,770,601	–	22,429,677	22,429,677	–
Պահանջներ բանկերի նկատմամբ	25,290,741	25,290,741	–	8,810,863	8,810,863	–
Հաճախորդներին տրված վարկեր	164,804,909	164,376,843	(428,066)	161,497,702	160,652,451	(845,251)
Ֆինանսական պարտավորություններ						
Պարտավորություններ ՀՀ ԿԲ-ի նկատմամբ	29,179	29,179	–	47,092	47,092	–
Պարտավորություններ բանկերի նկատմամբ	5,793,345	5,793,345	–	4,028,101	4,028,101	–
Հաճախորդների հաշիվներ	170,456,029	170,098,686	357,343	160,314,489	159,924,389	390,100
Այլ փոխառու միջոցներ	7,401,072	7,443,966	(42,894)	8,365,062	8,248,992	116,070
Ընդամենը չհանաչված իրական արժեքում փոփոխություններ			(113,617)			(339,081)

Չափման մեթոդներ և ենթադրություններ

Ստորև նկարագրված են այն մեթոդներն ու ենթադրությունները, որոնք օգտագործվում են սույն ֆինանսական հաշվետվություններում իրական արժեքով չարտացոլված ֆինանսական ակտիվների իրական արժեքը որոշելու նպատակով:

Ակտիվներ, որոնց իրական արժեքը մոտ է հաշվեկշռային արժեքին

Իրացվելի և մարման կարճ ժամկետ (մինչև երեք ամիս) ունեցող ֆինանսական ակտիվների կամ ֆինանսական պարտավորությունների իրական արժեքը մոտավորապես համարժեք է իրենց հաշվեկշռային արժեքին: Սույն ենթադրությունը նաև կիրառվում է ցպահանջ ավանդների և անժամկետ խնայողական հաշիվների նկատմամբ:

Ածանցյալ գործիքներ

Ածանցյալ ֆինանսական գործիքները, որոնք գնահատվում են օգտագործելով շուկայական ելակետային տվյալներ, հիմնականում տոկոսային և արժույթային սվոպեր են և արտարժույթային ֆորվարդ պայմանագրեր: Ամենահաճախ կիրառվող գնահատման մեթոդները ներառում են ֆորվարդների գնորոշման և սվոպ մոդելներ՝ օգտագործելով ներկա արժեքի հաշվարկներ: Այս մոդելները հաշվի են առնում տարբեր ելակետային տվյալներ, ինչպիսիք են՝ գործընկերների վարկունակությունը, արտարժույթի սիոթև և ֆորվարդ դրույքները և տոկոսադրույքի կորը:

Ածանցյալ ֆինանսական գործիքները, որոնք գնահատվում են օգտագործելով ոչ շուկայական ելակետային տվյալներ, հիմնականում երկարաժամկետ օպցիոնի պայմանագրերն են: Այս ածանցյալ գործիքները գնահատվում են՝ օգտագործելով բինոմիալ մոդելներ: Մոդելները ներառում են տարբեր ոչ դիտարկելի ենթադրություններ, որոնք ներառում են շուկայական փոխարժեքի տատանումներ:

Ամորտիզացված արժեքով հաշվառվող ֆինանսական ակտիվներ և պարտավորություններ

Գնանշվող արժեթղթերի իրական արժեքն հիմնվում է հաշվետու ամսաթվի դրությամբ գնանշման վրա: Զգնանշվող գործիքների, հաճախորդներին տրված վարկերի, հաճախորդների ավանդների, բանկերի նկատմամբ պահանջների, ՀՀ ԿԲ-ի նկատմամբ պարտավորությունների, բանկերի նկատմամբ պարտավորությունների, այլ ֆինանսական ակտիվների և պարտավորությունների իրական արժեքը չափվում է ապագա դրամական հոսքերի զեղչման միջոցով՝ ներկա պահին նմանատիպ պայմաններ, վարկային ռիսկ և մարման ժամկետ ունեցող պարտավորությունների դրույքների կիրառմամբ:

(հազար ՀՀ դրամ)

27. Փոխանցված ֆինանսական ակտիվներ և որպես գրավ պահվող կամ տրամադրված ակտիվներ**Փոխանցված ֆինանսական ակտիվներ, որոնք ամբողջությամբ չեն ապաճանաչվում**

Ստորև ներկայացված է ֆինանսական ակտիվների ցանկը, որոնք այնպես են փոխանցվել, որ բոլոր փոխանցված ֆինանսական ակտիվները կամ փոխանցված ֆինանսական ակտիվների մի մասը չեն բավարարում ապաճանաչման չափանիշներին:

	Փոխանցված ֆինանսական ակտիվներ	Պարտքային պետական արժեթղթեր 2025թ.	Պարտքային պետական արժեթղթեր 2024թ.
Ակտիվների հաշվեկշռային արժեք	Հետգնման պայմանագրեր	-	-
Ընդամենը		-	-
Համապատասխան պարտավորությունների հաշվեկշռային արժեք	Հետգնման պայմանագրեր	-	-
Ընդամենը		-	-
Զուտ դիրք		-	-

Հետգնման պայմանագրեր

Հետգնման պայմանագրով վաճառված արժեթղթերը փոխանցվում են երրորդ կողմին, և Բանկը դրա փոխարեն ստանում է դրամական միջոցներ կամ այլ ֆինանսական ակտիվներ: Արժեթղթերի արժեքի ավելացման կամ նվազման դեպքում, Բանկը, որոշակի իրավիճակներում, կարող է պահանջել կամ նրանից կարող է պահանջվել դրամական միջոցների տեսքով լրացուցիչ ապահովություն: Բանկը եկել է այն եզրակացության, որ պահպանում է գրեթե բոլոր ռիսկերն ու օգուտները կապված այդպիսի արժեթղթերի հետ, այդ թվում վարկային, շուկայական, երկրային և գործառնական ռիսկերը, և այդ պատճառով չի ապաճանաչել դրանք: Բացի այդ, Բանկը ճանաչում է ֆինանսական պարտավորությունները ստացված դրամական միջոցների նկատմամբ:

Նման ձևով, Բանկն իրավունք ունի վաճառել կամ գրավադրել փոխառությամբ ներգրավված կամ հակադարձ հետգնման պայմանագրով ձեռք բերած արժեթղթերը, բայց պարտավոր է վերադարձնել արժեթղթերը: Այս դեպքում գործընկերը պահպանում է սեփականության հետ կապված գրեթե բոլոր ռիսկերը և օգուտները: Հետևաբար, Բանկը չի ճանաչում այդպիսի արժեթղթերը, այլ ճանաչում է առանձին ակտիվ դրամական տեսքով տրամադրված ցանկացած գրավի նկատմամբ:

28. Ֆինանսական գործիքների հաշվանցում

Ստորև ներկայացված աղյուսակները ներառում են ֆինանսական ակտիվները, որոնք հաշվանցվել են ֆինանսական պարտավորությունների հետ ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում, ինչպես նաև հաշվանցման վերաբերյալ իրավաբանորեն ամրագրված գլխավոր համաձայնագրերի և նմանատիպ համաձայնագրերի (ISDA, RISDA և այլն) հետևանքները, որոնք չեն հանգեցնում հաշվանցման ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում:

2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	Ծանաչված ֆինանսական և պարտավորությունների համախառն գումար՝ հաշվանցված			Ֆինանսական Կապակցված գումարներ, որոնց գծով ակտիվների գումար՝ հաշվանցված			Ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում հաշվանցում չի իրականացվել		
	Ծանաչված ֆինանսական ֆինանսական ֆինանսական և վիճակի մասին			և վիճակի մասին			Ստացված ոչ հրամական 2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ		
	համախառն գումար			համախառն գումար			համախառն գումար		
	-յունում			-յունում			-յունում		
Ֆինանսական ակտիվներ									
Հակադարձ հետգնման	8,776,024	-	8,776,024	(8,776,024)	-	-			

(հազար ՅՅ դրամ)

Կայանաագրեր						
Ընդամենը	<u>8,776,024</u>	<u>-</u>	<u>8,776,024</u>	<u>(8,776,024)</u>	<u>-</u>	<u>-</u>
Ֆինանսական պարտավորություններ						
Հետգնման կայանաագրեր	<u>-</u>	<u>-</u>	<u>-</u>	<u>-</u>	<u>-</u>	<u>-</u>
Ընդամենը	<u>-</u>	<u>-</u>	<u>-</u>	<u>-</u>	<u>-</u>	<u>-</u>

	Ճանաչված ֆինանսական	պարտավորությունների համախառն գումար՝ հաշվանցված	Ֆինանսական պակտիվների գումար՝ ներկայացված	Կապակցված գումարներ, որոնց գծով ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում հաշվանցում չի իրականացվել		
	Ճանաչված ֆինանսական և ակտիվների համախառն գումար	ֆինանսական և վիճակի մասին հաշվետվությո- ւթյունում	ֆինանսական և վիճակի մասին հաշվետվությո- ւթյունում	ֆինանսական և գործիքներ Ստացված ոչ դրամական ապահովում		Հուլիս գումար
2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ						
Ֆինանսական ակտիվներ						
Հակադարձ հետզնման պայմանագրեր	7,812,017	-	7,812,017	(7,812,017)	-	-
Ընդամենը	7,812,017	-	7,812,017	(7,812,017)	-	-
Ֆինանսական պարտավորություններ						
Հետզնման պայմանագրեր	-	-	-	-	-	-
Ընդամենը	-	-	-	-	-	-

29. Ակտիվների և պարտավորությունների մարման ժամկետների վերլուծություն

Ստորև բերված աղյուսակում ներկայացված են ակտիվները և պարտավորությունները՝ իրենց սպասվելիք մարման ժամկետների կտրվածքով: Բանկի պայմանագրային չգեղջկած պարտավորությունների մարման վերաբերյալ տեղեկատվությունը բացահայտված է ճանդագրություն 25-ում՝ «Ռիսկերի կառավարում»:

	31/12/2025 թ.			31/12/2024 թ.		
	Մեկ տարվա ընթացքում	Մեկ տարուց ավել	Ընդամենը	Մեկ տարվա ընթացքում	Մեկ տարուց ավել	Ընդամենը
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	23,770,601	–	23,770,601	22,429,677	–	22,429,677
Առևտրային արժեթղթեր	–	–	–	–	–	–
Պահույններ բանկերի նկատմամբ	25,290,741	–	25,290,741	8,810,863	–	8,810,863
Հաճախորդների տրված վարկեր	78,507,254	86,297,655	164,804,909	71,554,909	89,942,793	161,497,702
Ներդրումային արժեթղթեր	9,621,494	13,709,659	23,331,153	7,896,933	13,899,684	21,796,617
Հետգնման պայմանագրերով գրավադրված ներդրումային արժեթղթեր	–	–	–	–	–	–
Հիմնական միջոցներ	–	12,318,623	12,318,623	–	13,044,758	13,044,758
Ոչ նյութական ակտիվներ	–	3,131,507	3,131,507	–	3,154,741	3,154,741
Ընթացիկ ակտիվներ	–	–	–	–	–	–
Հաճախորդների տրված զափույթահարկի գծով	–	217,853	217,853	260,311	–	260,311
Այլ ակտիվներ	3,221,264	1,130,556	4,351,820	3,795,278	1,712,422	5,507,700
ԸՆԴԱՄԵՆԸ	140,411,354	116,805,853	257,217,207	114,747,971	121,754,398	236,502,369
Պարտավորություններ ՀՀ ԿԲ-ի նկատմամբ	–	29,179	29,179	–	47,092	47,092
Պարտավորություններ բանկերի նկատմամբ	5,793,345	–	5,793,345	4,028,101	–	4,028,101
Հաճախորդների հաշիվներ	166,234,342	4,221,687	170,456,029	156,120,252	4,194,237	160,314,489
Այլ փոխառու միջոցներ	341,825	7,059,247	7,401,072	353,274	8,011,788	8,365,062
Պահուստներ	114,297	–	114,297	29,329	–	29,329
Ընթացիկ պարտավորություններ զափույթահարկի գծով	1,883,448	–	1,883,448	1,167,840	–	1,167,840

(հազար ՀՀ դրամ)

Հետաձգված հարկային պարտավորություններ	-	-	-	-	636,569	636,569
Այլ պարտավորություններ	3,495,321	-	3,495,321	2,553,098	-	2,553,098
Ընդամենը	177,862,578	11,310,113	189,172,691	164,251,894	12,889,686	177,141,580
Չուտ դիրք	(37,451,224)	105,495,740	68,044,516	(49,503,923)	108,864,712	59,360,789

Բանկը ներգրավել է նշանակալի միջոցներ հաճախորդներին: Այդպիսի միջոցների էական նվազումը կարող է բացասաբար անդրադառնալ Բանկի գործունեության վրա: Ղեկավարությունը գտնում է, որ տեսանելի ապագայում Բանկի ֆինանսավորման ծավալները կպահպանվեն կայուն մակարդակի վրա, և այդ միջոցների վերադարձման անհրաժեշտության դեպքում Բանկը կստանա նախօրոք ծանուցում, և կարող է իրացնել իր իրացվելի ակտիվները՝ անհրաժեշտ վճարումներ իրականացնելու նպատակով:

Մարման ժամկետների միջև տարբերությունների վերլուծությունը չի արտացոլում այն ընթացիկ հաշիվների միջոցների պատմական կայունությունը, որոնց վերադարձը սովորաբար տեղի է ունենում ավելի երկար ժամանակահատվածի ընթացքում, քան ներկայացված է վերոնշյալ աղյուսակում:

Հայաստանում գործում է նաև Ավանդների երաշխավորման հիմնադրամ, որը ոչ առևտրային կազմակերպություն է և հիմնվել է Հայաստանի Հանրապետության Կենտրոնական բանկի նախաձեռնությամբ՝ «Ֆիզիկական անձանց բանկային ավանդների հատուցումը երաշխավորելու մասին» օրենքի համաձայն: Դրամային ավանդի երաշխավորված առավելագույն չափը կազմում է 16 միլիոն ՀՀ դրամ: Արտարժույթով ներգրավված ավանդի երաշխավորման առավելագույն չափը կազմում է 7 միլիոն ՀՀ դրամ: Ավանդների երաշխավորումն իրականացվում է Հիմնադրամի միջոցների հաշվին, որոնք ձևավորվում են Հայաստանի բոլոր առևտրային բանկերի կողմից եռամսյակային կտրվածքով կատարվող վճարումների հաշվին: Հիմնադրամի գործունեության նկատմամբ վերահսկողությունը իրականացնում է Հայաստանի Հանրապետության Կենտրոնական բանկը:

30. Կապակցված կողմերի հետ գործառնություններ

ՀՀՄՍ 24 «Կապակցված կողմերի բացահայտումներ» ստանդարտի համաձայն կողմերը համարվում են կապակցված, եթե կողմերից մեկը հնարավորություն ունի վերահսկել կամ նշանակալի ձևով ազդել մյուս կողմի գործառնական և ֆինանսական որոշումների վրա: Կողմերի կապակցված լինելը որոշելիս հաշվի է առնվում կողմերի փոխհարաբերությունների բովանդակությունը, այլ ոչ միայն դրանց իրավական ձևը:

Կապակցված կողմերը կարող են այնպիսի գործարքների մեջ մտնել, որոնք չէին իրականացվի ոչ կապակցված կողմերի միջև, և կապակցված կողմերի միջև իրականացվող գործարքների գներն ու պայմանները կարող են տարբերվել ոչ կապակցված կողմերի գործարքների գներից և պայմաններից:

Մայր կազմակերպության վերաբերյալ տեղեկատվությունը բացահայտված է Ծանոթագրություն 1-ում: Ընդհանուր վերահսկողության ներքո գտնվող կազմակերպությունները իրենցից ներկայացնում են մայր կազմակերպության և Ռուսաստանի Դաշնության կառավարության վերահսկողության ներքո գտնվող կազմակերպությունները:

Կապակցված կողմերի հետ գործառնությունների գծով մնացորդները հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ ներկայացված են ստորև.

	2025թ.			2024թ.		
	Մայր կազմակերպություն	Ընդհանուր վերահսկողության տակ գտնվող ընկերություններ	Առանցքային կառավարչական անձնակազմ	Մայր կազմակերպություն	Ընդհանուր վերահսկողության տակ գտնվող ընկերություններ	Առանցքային կառավարչական անձնակազմ
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	966,384	247,979	-	1,255,464	425,724	-
Վարկեր հունվարի 1-ի դրությամբ	-	-	116,594	-	4,050,000	144,439
Տարվա ընթացքում տրամադրված վարկեր	487,505	-	112,980	-	215,063	19,667
Տարվա ընթացքում վարկերի մարումներ	-	-	(52,272)	-	(4,265,063)	(47,512)
Զմարված վարկեր ժամանակաշրջանի վերջում	487,505	-	177,302	-	-	116,594
Հանած՝ արժեզրկման պահուստ ժամանակաշրջանի վերջում	-	-	(2,761)	-	-	(1,051)
Զմարված զուտ վարկեր ժամանակաշրջանի վերջում	487,505	-	174,541	-	-	115,543
Ավանդներ հունվարի 1-ի	-	5,010,686	139,178	-	9,343,450	111,147

(հազար ՀՀ դրամ)

դրությամբ

Տարվա ընթացքում ստացված ավանդներ	-	7,898,307	407,264	-	5,176,004	265,142
Տարվա ընթացքում մարված ավանդներ	-	(4,628,691)	(170,392)	-	(9,508,768)	(237,111)
Ավանդներ ժամանակաշրջանի վերջում	-	8,280,302	376,050	-	5,010,686	139,178
Հաշվարկային և ընթացիկ հաշիվներ ժամանակաշրջանի վերջում	5,753,286	1,656,722	14,373	3,746,889	2,311,657	88,491
Պայմանագրային պարտավորություններ և տրված երաշխիքներ	-	-	4,385	-	-	4,162

Ստորև ներկայացված է կապակցված կողմերի հետ գործառնություններից եկամուտներն ու ծախսերը.

	2025թ.			2024թ.		
	Մայր կազմակերպություն	Ընդհանուր վերահսկողության տակ գտնվող ընկերություններ	Առանցքային կառավարչական անձնակազմ	Մայր կազմակերպություն	Ընդհանուր վերահսկողության տակ գտնվող ընկերություններ	Առանցքային կառավարչական անձնակազմ
Տոկոսային եկամուտներ վարկերի գծով	4,357	822	14,437	109,018	284,306	15,265
Վարկերի արժեզրկում	-	-	(927)	-	-	1313
Տոկոսային ծախսեր հաճախորդների միջոցների և բանկերի միջոցների գծով	-	(546,962)	(27,449)	-	(957,739)	(8,002)
Միջնորդավճարների գծով զուտ եկամուտներ/(ծախսեր)	-	-	623	-	-	397

Ղեկավար անձնակազմի գծով կատարված փոխհատուցումները հետևյալն են.

	31/12/2025	31/12/2024
Աշխատավարձ և այլ կարճաժամկետ վճարումներ աշխատակիցներին	857,449	788,643
Ընդամենը առանցքային կառավարչական անձնակազմի փոխհատուցում	857,449	788,643

31. Ֆինանսավորման գործունեության արդյունքում առաջացող պարտավորությունների փոփոխություն

	Այլ փոխառու միջոցներ	Ընդամենը
Հաշվեկշռային արժեք 2024թ. հունվարի 1-ի դրությամբ	9,145,575	9,145,575
Թողարկումից մուտքեր	873,090	873,090
Մարումներ	(1,857,489)	(1,857,489)
Վարձակալության գծով պարտավորություններին ոչ դրամական ավելացումներ	69,931	69,931
Արտարժույթի վերագնահատման ազդեցությունը	-	-
Այլ	133,955	133,955
Օտարումներ	-	-
Հաշվեկշռային արժեք 2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	8,365,062	8,365,062
Թողարկումից մուտքեր	422,371	422,371
Մարումներ	(1,517,942)	(1,517,942)
Վարձակալության գծով պարտավորություններին ոչ դրամական ավելացումներ	-	-
Արտարժույթի վերագնահատման ազդեցությունը	-	-
Այլ	131,581	131,581
Օտարումներ	-	-
Հաշվեկշռային արժեք 2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	7,401,072	7,401,072

«Այլ» հոդվածը ներառում է այլ փոխառու միջոցների և վարձակալության պարտավորությունների գծով հաշվեկշռված, բայց դեռևս չվճարված տոկոսների ազդեցությունը: Բանկը դասակարգում է վճարված տոկոսները որպես գործառնական գործունեությունից դրամական միջոցների հոսքեր:

(հազար ՀՀ դրամ)

32. Կապիտալի համարժեքություն

Բանկն ակտիվորեն կառավարում է կապիտալը իր գործունեությանը բնորոշ ռիսկերը ծածկելու նպատակով: Բանկի կապիտալի համարժեքությունը վերահսկվում է՝ կիրառելով 1988թ. Բազելյան համաձայնագրով սահմանված կապիտալի գծով սկզբունքներն ու ցուցանիշները և Բանկի վերահսկման նպատակով ԿԲ-ի կողմից սահմանված նորմատիվները:

Անցած տարվա ընթացքում Բանկն ամբողջությամբ համապատասխանել վերահսկողի կողմից սահմանված կապիտալի պահանջներին:

Բանկի կապիտալի կառավարման առաջնային նպատակներն են՝ համոզվել, որ Բանկի կապիտալը համապատասխանում է վերահսկողի կողմից սահմանված պահանջներին, և որ Բանկն ապահովում է ամուր վարկային վարկանիշ և ուժեղ կապիտալի ցուցանիշներ՝ իր գործունեությունը ամրապնդելու և բաժնետերերի շահույթը առավելագույնի հասցնելու նպատակով:

Բանկը սահմանում է որպես կապիտալ այն հոդվածները, որոնք Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն սահմանվում են որպես վարկային կազմակերպությունների կապիտալի բաղադրիչներ: ՀՀ ԿԲ-ի՝ կապիտալի նկատմամբ պահանջների համաձայն, որոնք հիմնված են Բազելի համաձայնության դրույթների վրա, Բանկի կապիտալի և ռիսկով կշռված ակտիվների հարաբերակցությունը (նորմատիվային կապիտալի գործակից) չպետք է գերազանցի սահմանված նվազագույն մակարդակը: 2025թ. դեկտեմբերի 31-ի և 2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ այդ նվազագույն մակարդակը կազմել է 12%: 2025թ. դեկտեմբերի 31-ի և 2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Բանկի ընդհանուր կապիտալի գործակիցը համապատասխանում է պարտադիր պահանջներին:

Կապիտալի համարժեքության նորմատիվ

2025թ. դեկտեմբերի 31-ի և 2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Բանկի ընդհանուր կապիտալի, ռիսկով կշռված ակտիվների և կապիտալի համարժեքության նորմատիվի չափերը՝ հաշվարկված համաձայն ՀՀ կենտրոնական բանկի պահանջների, ներկայացված է ստորև՝

	31/12/2025	31/12/2024
1-ին մակարդակի հիմնական կապիտալ	62,995,063	48,310,033
1-ին մակարդակի կապիտալ	62,995,063	48,310,033
2-րդ մակարդակի կապիտալ	1,525,990	2,139,800
Ընդհանուր կապիտալ	64,521,053	50,449,833
Ռիսկերով կշռված ակտիվներ	219,825,489	201,886,479
1-ին մակարդակի հիմնական կապիտալի համարժեքություն	28,66%	23,93%
1-ին մակարդակի կապիտալի համարժեքություն	28,66%	23,93%
Ընդհանուր կապիտալի համարժեքություն	29,35%	24,99%